

Սակայն հանդերձ այսու պէտք է ըսել, թէ ինչպէս Փաւստոսի զու-  
գակշխութեաց մէջ այսպէս նաև առ կորեան, ուրոյն առանձին  
բնադրոյմն պահուած է միշտ անկախ յԱգաթանգեղայ, նկատմամբ  
անուանց, տեղեաց և անձանց. և ժամանակագրական և պատմուկան  
գէպք անգամ երբեմն նոր յաւելուածներով և երբեմն ալ յապաւ-  
մամբ՝ իբր ՚ի փակագծի նշանակուած են, որոնք միշյն կամ միւսնե-  
րուն միայն յատուկ էին. Այսպէս ուրեմն իրաւամբ և տռանց խա-  
րէութեան ստուեր մի ձգելու իւր անձին և գրութեան վրայ, կարեր  
քաջ՝ հաւատարիմ՝ սկանչելին կորիւն գոյնել՚ի լուր ժամանակակցացն  
և ապագայից, թէ զանոնք՝ Ոչ եթէ՚ի հին համբաւուց տեղեկացեալ,  
այլ որոց ինքն ականատես եղած էր գրեց. այնու զի պատմութիւնը  
բառից կամ շարադրութեան կիրառութեան մեջ կայացած չէ, այլ  
իրաց դիպաց և անուանց և պարագայից աւանդութեանը մէջ, զորս  
և տեսած էր և լսած. իսկ ես կարեմ զայս գնել վախճան բանիցո,  
թէ կորիւն այսու եղանակաւ է բանաբաղ ինքեան, և թէ կորիւն  
հաւասարապէս մեծ է՝ ՚ի դիրս Ագաթանցեղ, որպէս ՚ի Պատմութեան  
անդ Ո. Մեսրովբայ. իսկ ապագայք ինչպէս կուզեն թող դատեն զնաւ

Հ. Բարսեղ. Սարգսոսու

### Ն Ա.Խ Կ Ի Ւ ԱԶԳԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՐՍԱՆԵԱՑ

Մեր ազգային ձեռագիրներէն միոյն մէջ հայկական ՌԾՓ թուա-  
կանաւ, Այնունութեան խորհրդոյն վրայ գրուած ճառ մը գտանք.  
յորում հեղինակն, որ կենթադրուի ըլլալ Տավթեացին և կամ նորա  
ժամանակակից անձ մը, մի առ մի նշանակեր է իւր ժամանակին  
եղած հարսանեաց հանդիսին ամենայն եկեղեցական և ընտանեկան  
սովորութիւնքը. յորմէ քաղելով ընտրանօք սոյն պատառիկս՝ կը  
հրատարակեմք զայն յընթերցումն մերազնեայ բանաօիրաց. Անոր  
մէջ հեղինակն իւրաքանչիւր սովորութեանց մեկնութիւնքը կը դնէ  
առանձինն, որոց ՚ի հաստատութիւն վկայութիւններ և օրինակներ  
մէջ կը բերէ ՚ի Ս. Գրոց, զըրս աւելորդ համարելով՝ զանց ըրինք մի  
առ մի կարգել աստ:

Այդ նախ սովորութիւն է ազգաց, փեսային խնդրել հարսն և կրկին կեր-  
պիւ ընտրեն. նախ իւրեանց հաւատոյն, թէ հայ քրիստոնեայ է և թէ այլ  
քրիստոնեայք. և ապա ՚ի մէջ նոցա՝ յընտիր և պատուական ազգէ մեծա-  
տանց և յազատաց, զի գոն աղքատ և գռեհիկ Հայք.

Երկրորդ սովորութիւն է, զի յետ ընտրութեանն երթեալ խօսին և տան թաս մի գինի 'ի հայր և 'ի մայր հարսինն և կամ 'ի համանմանն նոցին:

Երրրրդ սովորութիւն է, յամենայն տօնի և տարեկանաց գնալ 'ի տան հարսինն ընծայիր, և կերակրով:

Չորրորդ սովորութիւն է, զնալ քահանայիցն և տանիկ նշան . և այն մատանի կամ ապարանջւն կամ զինդ, որ է ապաւորումն և կամ կնիբ առ հարսն և կնիբ 'ի կան նորա, մինչ զի այլ ոչ գոյ հնար քակել 'ի միւհանց:

Հինգերորդ, զի յետ նշանացն սովորութիւն է առնել պատրաստութիւն հարսանեացն, և տալ զօժիտն հաց և գինի և այլ ոչինչ. զի աւելի ինչ ինգրեն, յանօրինացն է:

Իսկ վեցերորդն կատարի 'ի ժամանակ հարսանեացն, զոր օրինակ և Փրիստոսի 'ի ժամանակութեանն . և զի յերեկոյին ժամեւն տանեն հոլու էս չորս գունով, կարմիր և գեղին, կանաչ և սպիտակ . և զշանդերձն փեսային և հարսին 'ի վերայ եղեալ տանին նորս 'ի տուն հարսին: Բայց զշարսինն զամենայն ինչ մերկացուցանեն 'ի նաևնէ և ապա զնորն զգեցուցանեն . իսկ փեսային ոչ հանեն, այլ 'ի վերայ հնոյն զնորն զգեցուցանեն:

Իսկ եօներորդ, զի 'ի ժամ հարսանեացն հրաւիրակը առաքին 'ի տուն հարսին՝ տալ աւելիս գալոյ հարսանեացն, զոր գեղջուկըն լլուսէ կոշին վասն թագնաբար զայդոյն:

Իսկ ութերորդ սովորութիւն է, զի մինչեւ 'ի ժամանակ պսակին' գալ և առնուլ և ուտել և մերձաւորաց փեսային 'ի տան հարսին. իսկ յետ պսակին այլ ոչ:

Իսկ իններորդ սովորութիւն է, տանել 'ի գուռն եկեղեցւոյն բազում երգօք և նուազարսնօք, ծնձայիւր և քարայիք և երիվորգ:

Իսկ տասներորդ սովորութիւն է, 'ի գրան եկեղեցւոյն զինահարեալ նախ մայրն 'ի փեսայն և բան քահանայն զհարսն 'ի փեսայն, և ապա անգրադաւալ և երկրուեանն յանձն առնուն:

Իսկ մետասաներորդ, զի սովորութիւն է, նարօս որորեալ կարմիր ընդ բամբակի խառնեալ և երեկոյի շարամանեալ, մի կուղն կարմրումն խառն և երկուսն անխառն միայն բամբակ, զոր մանեն փեսեղբայրն և քահանայն, հարսին բուրն և քահանայն, և նովլա կապեն զիսաչն 'ի պարանոցն փեսային:

Իսկ երկուսաներորդ սովորութիւն է, զի արտաքոյ եկեղեցւոյն յանձնեն և 'ի մեջ եկեղեցւոյն պսակին, և արտաքոյ եկեղեցւոյն առնեն զգործ ամուսնութեան:

Իսկ երերոսասաներորդ սովորութիւն է, պատարագաւ պսակել. ժամամըտու և ամենայն որ ինչ պսակին հարգն, զի 'ի Փրիստոս օրինուկեալ է:

Իսկ չորերոտասաներորդ սովորութիւն է, պսակ անուանել և պսակ գնել 'ի գումար փեսային և հարսին:

Իսկ հնգերոտասաներորդ սովորութիւն է, սպիտակ հանդերձ զգեցուցանել փեսային և խաչ զօտի կապել, կարմիր յետոյ և առաջի. մանտանդ զի յետ ընթերցմանն օրհնեն բաժակ և զայն ըմպել տալ զիկսն հարսին և զկէսն փեսային:

Իսկ վեցուսաներորդ, զի սուր է քարշեալ յաջմէ և յահեկէ 'ի հանելն յեկեղեցւոյն:

1 Այս բան պահանձեր յօրինակին:

իսկ եօթնետասներորդ, զի նստին յաստիճան եկեղեցւոյն և ամենեքնան պարառեալ երկրպագեն թագւոր զնա կարդալով՝

իսկ ոթեատասներորդ սովորութիւն է, այլ ոչ դառնալ 'ի տուն հարսին, այլ երթան 'ի տուն հօրն փեսան:

իննետասներորդ սովորութիւն է, 'ի տեղի բարձր նստիլ որ ակներեա ամենեցւոն տեսանիցի, ոչ ուսել և ոչ ըմպել մինչև ցերեկոյ. իսկ երեկոյն առաջի իւրոցն ուտել սակաւ ինչ:

Քսաներորդ, զի եօթն օրն... անտանացն, որչափ նստի փեսայն!..... նախատինս տան հարսն քուերն:

Քսաներորդ առաջներորդ, զի յետ եօթն աւուր բառնի պատկն և ապա հրաման մերձաւորութեան յետ ութ աւուրն:

## ՏԱՂ

### Ի ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

(Հին քնար)

**Ա**յսօր պանծալի երգով գոշեմք և մեք  
ի ձայն քաղցրութեան նրւագ.  
**Ե**ախնեացըն մեծաց առաքելոց գընդին,  
Նըմանող լցուք յորդորական ըղձի.։  
**Դ**ասոց երկնայնոց հանդիսակից գոլով  
Վարուք մաքրութեամբ հանդիպեսուք տօնիս.  
**Շ**ոպէից կազմիչ Հոգին Արտուած այսօր  
ի ձայն սաստկութեան հողմոյն հընչեաց յաշխարհս։  
**Շ**հրամեն տեսակ անուշահոտ բուրմամբ  
Լըցան արարածք և սըրբեցան վարուք.  
**Ը**ին տագնապեալ այլուկեզու Հրէիցն  
Ճեպով ընթացեալ 'ի վերնատունըն սուրբ։  
**Ա**րուեալ դողսային յօտարածայն լեզու ացն  
Անտեղեակը եղեալ զմորգարէին առածն.  
**Շ**Հոգւոյն շարժեալ լիքմ հաւատոյ այսօր,  
Տարածեաց զուկանն աստուածային բանին։  
Երրակի անձանց երիս հազարս որսաց.  
**Ժ**րկիրս նոր երկին զարդարեցաւ այսօր  
Առքեղ գալոսաւամբ ամենիմաստ Հոգւոյն  
Աստուածակատական նոր նորոգեաց զեղեալքս։  
**Վ**արունն 'ի բարձանց մինն յերից Հոգին,  
Յայտնեաց զդիմուհուրդն Հօր և Որդւոյ մարդկան,  
Մաքրեաց զարարածս 'ի զիւամմլ զոհիցին։  
**Գ**ոշմամբ ճայնակից ընտրեալ հօտին այսօր  
Լիցուք խըմբակից եկեղեցւոյ մանկունք,  
Զփառս 'ի վեր երգել Երրորդութեանն միշտ։

1 Ցեղաժամանէ թղթայն է քրոցն՝ ահընթեւնիք թան բառքն։